Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-25/22 ծածկագրով գնման ընթացակարգի
/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

01.10.2025թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հայրապետյան, Ա. Մանուկյան, Տ. Ավետիսյան, Տ. Բաղալյան*
Նիստից բացակայում է՝ Տ. Բաղալյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Թադևոսյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գների վերաբերյալ

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)
1	բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային	9500000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 29.09.2025թ.-ին ժամը 12:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 30.09.2025 թ.-ին ժամը 12:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	«Մոնիկ» ՍՊԸ	ք. Երևան, Աջափնյակ Հաղթանակ թաղ 1-ին նրբ 1/11	+37477173173	codepccomp@gmail.com
2	«ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք.Երևան, Շեվչենկոյի փողոց 1/Ի4,	+37493666330	mkhitaryangnumner@gmail.com
3	«ՆԵՔՍԱ» ՍՊԸ	Գրիգոր Լուսավորիչ 7,	+374 94281096	yerevan332@gmail.com

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-25/22 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

ՀՀ	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	Մոնիկ ՍՊԸ	9500000	7900000	20 %	9480000	7800000	20 %	9360000.00	
1	2	ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	9500000	7888000	20 %	9465600	7888000	20 %	9465600.00	
1	3	ՆԵՔՍԱ ՍՊԸ	9500000	10000000	20 %	12000000	10000000	20 %	12000000.00	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 30.09.2025 թվականին: Ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է Մոնիկ ՍՊԸ -ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Մոնիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

«Մոնիկ» ՍՊԸ-ի հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

eauction.armeps.am համակարգում «Տեխնիկական բնութագիր» այունակում «Անհրաժեշտ բոլոր մալուխները պետք է ներառված լինեն կոմպլեկտի մեջ...» առաջարկվող ապրանքի հատկանիշում առկա է «պետք է» բնութագրիչը, մինչդեռ անհրաժեշտ է հստակ նշել «Անհրաժեշտ բոլոր մալուխները ներառված են կոմպլեկտի մեջ»: «Օրիգինալ քարթրիջը պարտադիր ներառված պետք է լինի գործարանային կոմպլեկտի մեջ, նվազագույնը՝ 3050 էջի տպագրման հնարավորությամբ և ամսական տպագրման հնարավորությունը նվազագույնը՝ 80000 թերթ նախադասություններում...» առաջարկվող ապրանքի հատկանիշում առկա է «պետք է և նվազագույն» բնութագրիչները, մինչդեռ անհրաժեշտ է հստակ նշել «Օրիգինալ քարթրիջը ներառված է գործարանային կոմպլեկտի մեջ» և անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի էջերի և թերթերի քանակները: «Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում (հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները)...» նախադասությունում պետք է հստակ նշել սպասարկման կենտրոնի տվյալները: «Արտադրողի/ներկրողի կողմից նամակ հավաստագրի (MAF կամ DAF) տրամադրում...» նախադասությունը անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի հավաստագիր ներկայացնող կազմակերպության անվանումը:

«Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր)» նախադասությունը անհրաժեշտ է ներկայացնել մասնակցի տեսակետից: «Երաշխիքային ժամկետը՝ առնվազն մեկ տարի» հատկանիշում առկա է «առնվազն» բնութագրիչը, մինչդեռ անհրաժեշտ է հստակ նշել երաշխիքային ժամկետը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, Հանձնաժողովը որոշեց 01.10.2025թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Մոնիկ» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 03.10.2025թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Վարդան Հարությունյան
անդամներ՝		Աշոտ Հայրապետյան
		Արմենակ Մանուկյան
		Տավրոս Ավետիսյան
քարտուղար՝		Հեղինե Թադևոսյան